Կարգապահական գործ թիվ ԿԳ-17054

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 167-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/98-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՄՈՆԻԿԱ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարեն Սարդարյանի, Խորհրդի անդամներ՝ Կարեն Մեժլումյանի, Սիմոն Բաբայանի, Մելանյա Առուստամյանի, Արայիկ Ղազարյանի, Նելլի Հարությունյանի, Հրանտ Անանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Մոնիկա Մարգարյանի (արտոնագիր թիվ 841) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

04.07.2017թ. Պալատ է մուտքագրվել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի **(այսուհետ նաև՝ Դատարան)** դատավոր Ա.Գաբրիելյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 03.07.2017թ. որոշումը **(այսուհետ՝ Որոշում**), որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով 2017թ. հուլիսի 3-ի հերթական դատական նիստից առաջ ամբաստանյալ Տիգրան Մանուկյանի պաշտպան Մոնիկա Մարգարյանը հրաժարվել է զննության ենթարկվելուց և դատական նիստերի դահլիճ մտնելուց ՀՀ դատական օրենսգրքի 214-րդ հոդվածով սահմանված կարգով:

Դատարանը՝ Որոշմամբ վկայակոչելով նշված փաստական հանգամանքները և վերլուծելով 73-րդ հոդվածի 2-րդ մասը, 5-րդ մասը, 314.1-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերը, ՀՀ դատական օրենսգրքի 6-րդ հոդվածը, 214-րդ հոդվածի 1-ի մասը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4-րդ գլխի 4.1 կետը, գտել է, որ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով 2017թ. հուլիսի 3-ի դատական նիստին ներկայանալուց խուսափելով՝ փաստաբան Մոնիկա Մարգարյանն իր դատավարական իրավունքներից օգտվել է անբարեխղճորեն և անհարգելի չի կատարել իր դատավարական պարտականություններն, ինչով խոչընդոտել է դատական նիստի բնականոն ընթացքին՝ անհարգալից վերաբերմունք դրսևորելով դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ:

Որոշմամբ Դատարանը գտել է, որ փաստաբան Մոնիկա Մարգարյանի նկատմամբ, զննվելուց հրաժարվելու և առանց հարգելի պատճառի դատական նիստի չներկայանալու վարքագծի դրսևորման կապակցությամբ, պետք է կիրառվի դատական

սանկցիա՝ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով դիմելով փաստաբանական պալատ:

Դատարանը 03.07.2017թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որով որոշել է. *«Ամբաստանյալ Տիգրան Մանուկյանի պաշտպան Մոնիկա Մարգարյանի նկատմամբ կիրառել դատական սանկցիա՝ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով դիմելով փաստաբանական պալատ»:*

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 18.07.2017թ. թիվ 202-Ա/ԿԳ-17054 որոշմամբ փաստաբան Մոնիկա Մարգարյանի (արտոնագիր թիվ 841) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4 որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

21.07.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ռուբեն Բալոյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Սույն կարգապահական գործի նախապատրաստման փուլում Դիմողը բացատրություն չի ներկայացրել, և չի ներկայացել սույն կարգապահական գործի քննության համար նշանակված կարգապահական նիստին, թեև պատշաճ ծանուցված է եղել դրա օրվա, ժամի և վայրի մասին:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.

Սույն կարգապահական գործի քննության ընթացքում պատասխանողը նախապատրաստողին ներկայացրել է բացատրություն այն մասին, որ թիվ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով 2017 թ-ի հուլիսի 3-ին ժամը 11:00-ին նշանակված դատական նիստին մասնակցելու համար դատարան ներկայանալով՝ դատական կարգադրիչներին թույլ է տվել իրեն և պայուսակը մետաղաորսիչ սարքով զննել: Զննությունից հետո կարգադրիչները պահանջել են պայուսակը բացել և ներկայացնել դրա պարունակությունը, քանի որ մետաղաորսիչ սարքը ձայնային ազդանշան էր արձակել: Պատասխանողը նշել է, որ իր պայուսակը տեսանելի մետաղական մաս ուներ և բնական է, որ մետաղաորսիչ սարքը ձայնային ազդանշան էր արձակելու, և ինքը հրաժարվել է բացել պայուսակը և ներկայացնել դրա պարունակությունը, քանի որ կարգադրիչների նման պահանջն ապօրինի էր՝ կարգադրիչների ուշադրությունը հրավիրելով պայուսակի մետաղական մասի վրա: Սակայն, պայուսակը բացելուց և պարունակությունը իրենց ներկայացնելուց հրաժարվելու պատճառով կարգադրիչներն իրեն արգելել են ներս մտնել դատական նիստերի դահլիճ, որից հետո ինքը չի հեռացել և կանգնել է դատարանի շենքի մուտքի մոտ՝ դրսի հատվածում:

Պատասխանողը նշել է, որ որոշ ժամանակ անց քրեական գործով մյուս պաշտպանները դուրս են եկել և հայտնել, որ նախագահող դատավորը տեղեկացել է, որ պաշտպաններից ոմանք չեն կարողացել մուտք գործել դատական նիստերի դահլիճ, ընդմիջում է հայտարարել, որպեսզի պաշտպաններին հնարավորություն տա ներկայանալու դատական նիստին: Այդ ընթացքում ինքը կրկին փորձել է ներս մտնել,

սակայն կարգադրիչներն իրեն զննելուց հետո կրկին պահանջել են բացել պայուսակը և իրենց ներկայացնել դրա պարունակությունը, իսկ ինքը, բնականաբար, հրաժարվել է՝ վերը հիշատակված պատճառաբանությամբ, որի պատճառով կարգադրիչներն իրեն երկրորդ անգամ արգելել են ներս մտնել դատական նիստերի դահլիճ:

Պատասխանողը հավելել է, որ ինքը չի հեռացել, կանգնած է եղել դրսում՝ դատարանի շենքի մուտքի մոտ և որոշ ժամանակ անց գործով մասնակցող մյուս պաշտպաններից տեղեկացել է, որ նախագահող դատավորն իր նկատմամբ սանկցիա է կիրառել: Վերոգրյալից արդյունքում պատասխանողը եզրակացրել է, որ ինքը դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք չի դրսևորել, չի հրաժարվել զննվելուց և դատական նիստերի դահլիճ չի կարողացել մուտք գործել՝ կարգադրիչների ապօրինի գործողությունների հետևանքով:

Պալատի խորհրդին ներկայացված մեկ այլ բացատրությամբ պատասխանողը նշել է, որ փաստաբանը ոչ միայն պարտավոր չէ պայուսակի պարունակությունը ցուցադրել դատարանի միջանցքներում, այլև պայուսակում փաստաբանական գաղտնիք հանդիսացող նյութեր ունենալու դեպքում իրավունք չունի դա անել, իսկ իր պայուսակում 03.07.2017 թվականին, երբ կարգադրիչներն իրեն պայուսակի պարունակությանը ցույց տալու պահանջ էին ներկայացնում, գտնվել են փաստաբանական գաղտնիք հանդիսացող նյութեր: Բայց եթե անգամ անտեսվի այն փաստը, որ ՀՀ ԴՆԽ որոշումներով փաստաբանների համար պարտականություններ չեն կարող սահմանվել, կարգադրիչների վերոհիշյալ պահանջներն անգամ դատարանների նախագահների խորհրդի որոշմանն են հակասում. կարգադրիչները թիվ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով 03.07.2017 թ-ի դատական նիստից առաջ իրեն արգելված իրերից ազատվելու առաջարկ չեն ներկայացրել և չէին կարող ներկայացնել, քանի որ այդ օրվա դրությամբ որևէ իրավական ակտով, անգամ ՀՀ ԴՆԽ որևէ փաստաթղթով արգելված իրերի ցանկ սահմանված չի եղել: Հետևապես դատական կարգադրիչները ոչ միայն պայուսակը բացելու և դրա պարունակությունը ցույց տալու պահանջ ներկայացնելու իրավասություն չանեին, այլև զննություն սկսելու իրավունք չունեին, քանի որ զննությանը սկսելուց առաջ պարտավոր էին անձին արգելված իրերը ներկայացնելու առաջարկ ներկայացնել, որոնց ցանկը սահմանված չէր,այսինքն զննությանը նախորդող գործողությանը չկատարելու պայմաններում, կարգադրիչը զննությանը չէր կարող սկսել:

Փաստաբանը գտել է, որ դատական կարգադրիչի պահանջը կամայական էր և ապօրինի, ուստի այդ կամայական և ապօրինի պահանջին չենթարկվելու համար դատական նիստերի դահլիճ իր մուտքն արգելելը երկրորդ կամայականությունն ու ապօրինությանն էր, ինքն իր կամքից անկախ պատճառներով չի մտել նիստերի դահլիճ, որպիսի հանգամանքը, վերոհիշյալ փաստարկների լույսի ներքո, հանդիսանում է փաստաբանի մասնագիտական գործունեության խոչընդոտում:

Անդրադառնալով սույն կարգապահական գործով Խորհրդի 28.09.2017 թ-ի նիստին գործը նախագահող Կ.Սարդարյանի կողմից հնչեցրած այն հարցին, թե ինչու ինքը 03.07.2017 թ-ին վերոհիշյալ գործով դատական կարգադրիչների կողմից իր մուտքը դատական նիստերի դահլիճ արգելելելուց հետո ինչ-որ սև փաթեթ ձեռք չէի բերել, որպեսզի փաստաբանական գաղտնիք հանդիսացող նյութերը մեջը դներ, իսկ պայուսակի պարունակությունն էլ կարգադրիչներին ցույց տար, որպեսզի իրեն թույլ տային մուտք գործել դատական նիստերի դահլիճ և մասնակցեր գործի քննությանը, պատասխանողը նշել է, որ բացի այն, որ ինքը նշված օրը դատական նիստերի դահլիճ

մուտք չի գործել կագադրիչների կողմից կամայականորեն և ապօրինաբար իր մուտքն արգելելու պատճառով, նաև սույն կարգապահական գործը հարուցվել է Կանոնագրքի 4-րդ գլխի 4.1 կետի պահանջների հիմքով, քանի որ ըստ Դատարանի՝ զննության չենթարկվելը և դատական նիստին չներկայանալը Դատարանի նկատմամբ ակնհայտ անհարգալից վերաբերմունք է և հենց այդ նորմն է Դատարանը վկայակոչել: Ավելին, վերը նշված դատական ակտում չի նշվել, թե իր կողմից կարգադրիչների պահանջներին չենթարկվելու (որոնք ապօրինի էին) և նիստին չներկայանալու հետևանքով իր վստահորդների իրավունքները խախտել են, բացակայում է դիմում-բողոք նշված գործով իր վստահորդների կողմից այս հարցի կապակցությամբ, հետևաբար, նշված հարցը քննության առարկա դառնալ չի կարող:

Փաստաբանը նաև նշել է, որ քրեական գործով պաշտպանի չներկայանալը դատական նիստին, անկախ այն հանգամանքից, թե պաշտպանը հարգելի, թե անհարգելի պատճառներով չի ներկայացել, կարող է միայն մեկ հետևանք առաջացնել՝ դատական նիստի հետաձգում: Եվ այս դեպքում օրենսդիրը որևէ բացառություն չի արել՝ սահմանելով դատական նիստի հետաձգում՝ պաշտպանի չներկայանալու և այլ պաշտպանով փոխարինելու անհնարինության դեպքում՝ անկախ այն փաստից, թե ինչ պատճառով պաշտպանը չի ներկայացել դատական նիստին: Հետևաբար, եթե որևէ պաշտպան, անկախ պատճառներից, չի ներկայանում դատական նիստին և դատարանը չի հետաձգում գործի քննությունը, իսկ դրա արդյունքում խախտվում են մեղադրյալի իրավունքները, ապա իրավունքի խախտման բացասական հետևանքները կրում է դատարանը և ոչ թե պաշտպանը, հակառակ դեպքում բոլոր փաստաբանները, հարգելի պատճառներով չներկայանալու դեպքում էլ, մշտապես պետք է պատասխանատվության ենթարկվեն: Ուստի, եթե պարզվի, որ 03.07.2017 թվականին իր բացակայությամբ գործի քննությունը շարունակվել է և ինչ-որ կերպ իր վստահորդների իրավունքները խախտվել են, ապա պատասխանատվություն պետք է կրի դատավոր Ա.Գաբրիելյանը, ոչ թե ինքը:

Ըստ պատասխանողի՝ որևէ նորմ չի ամրագրել, որ փաստաբանը պարտավոր է իր մասնագիտական պարտականությունները կատարելիս ենթակվել պաշտոնատար անձանց, կարգադրիչների ապօրինի պահանջներին: Եթե Խորհուրդն այն սկզբունքով առաջնորդվի, որ փաստաբանը պարտավոր է կատարել պաշտոնատար կամ ոչ պաշտոնատար անձանց ապօրինի պահանջները՝ իր վստահորդի շահերի պաշտպանությունն իրականացնելու ընթացքում՝ հակառակ դեպքում կպատժվի, ապա այս սկզբունքը և հետագա պատժիչ նախադեպային պրակտիկան կհանգեցնեն փաստաբանների նկատմամբ կամայականությունների և ապօրինությունների իրականացմանը, որն անթույլատրելի է: Ավելին, նշանակված դատական նիստը նույն գործով առաջինն էր, հետևաբար իր վստահորդները դեռևս դատարանում իրենց համաձայնությունը չէին տվել քրեական գործով վարույթին իր կողմից որպես պաշտպան իրենց շահերը ներկայացնեի վերաբերյալ, որպիսի փաստը հաստատվում է Դատարանի նույն քրեական գործով կայացված մեկ այլ՝ 13.07.2017 թվականի դատական սանկցիա կիրառելու մասին որոշմամբ. որտեղ նշվել է, որ նույն քրեական գործով 13.07.2017 թվականի դատական նիստի ընթացքում Տիգրան Մանուկյանի և Թաթուլ Թամրազյանի ինքնությանը ճշտելու ընթացքում վերջիններս հանդես են եկել նույնաբովանդակ հայտարարություններով, մասնավորապես հայտնելով, որ չեն լիազորել պաշտպանին՝ Մոնիկա Մարգարյանին, իսկ այն փաստը, որ պատասխանողը 03.07.2017 թվականի դրությամբ հանդիսացել է Տիգրան Մանուկյանի պաշտպանը,

ինչպես նշվել է Դատարանի 03.07.2017 թվականի որոշման մեջ, պարտավոր էր ապացուցել դիմողը՝ դատավոր Ա.Գաբրիելյանը, որը չի արել:

Վերոգրյալի հիման վրա փաստաբան Մոնիկա Մարգարյանը խնդրել է իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

Պատասխանողը 2017 թվականի սեպտեմբերի 28-ին, ժամը՝ 19:30-ին նշանակված Խորհրդի նիստում պնդել է իր դիրքորոշումը, իսկ 2017 թվականի հոկտեմբերի 31-ին, ժամը՝ 19:30-ին չի ներկայացել կարգապահական գործի քննության համար նշանակված կարգապահական նիստին, թեև պատշաճ ծանուցված է եղել դրա օրվա, ժամի և վայրի մասին:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

07.08.2017թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստողը կազմել է եզրակացություն, որում վերջինս եզրակացրել է, որ փաստաբանի գործողություններն ուղղված չեն եղել դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելուն, այլ վերջինիս նպատակն անբարեխղճորեն և անհարկի իր դատավարական պարտականությունները կատարելուց խուսափելը չի եղել: Իրականում, պատասխանողը փորձել է կանխել դատական կարգադրիչների ոչ իրավաչափ վարքագիծը, որի արդյունքում իր համար առաջ են եկել բացասական հետևանքներ, այն է՝ վերջինս զրկվել է դատական նիստին մասնակցելու և իր վստահորդի շահերը պաշտպանելու հնարավորությունից: վերոգրյալի հիման վրա նախապատրաստողը գտել է, որ Պատասխանողի վերագրվող վարքագիծը սույն գործի հանգամանքներով չի հաստատվում:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 2017 թվականի սեպտեմբերի 28-ին, ժամը՝ 19:30-ին, 2017 թվականի հոկտեմբերի 31-ին, ժամը՝ 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի **(այսուհետ նաև՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

- Թիվ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով 03.07.2017 թվականի դատական նիստին, նախագահող դատավորի կողմից դատական նիստը սկսելիս, ինչպես նաև դատարանի կողմից ընդմիջում հայտարարելուց հետո փաստաբան Մոնիկա Մարգարյանը դատական նիստին ներկա չի գտնվել:
- Թիվ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով 2017 թ-ի հուլիսի 3-ին ժամը

11:00-ին նշանակված դատական նիստին մասնակցելու համար դատարան ներկայանալով՝ Մոնիկա Մարգարյանը դատական կարգադրիչներին թույլ է տվել իրեն և պայուսակը մետաղաորսիչ սարքով զննել:

- Զննությունից հետո կարգադրիչները պահանջել են պայուսակը բացել և ներկայացնել դրա պարունակությունը, քանի որ մետաղաորսիչ սարքը ձայնային ազդանշան է արձակել:
- Մոնիկա Մարգարյանը հրաժարվել է պայուսակը բացելուց և պարունակությունը կարգադրիչներին ներկայացնելուց:
- Կարգադրիչներն արգելել են Մոնիկա Մարգարյանին մտնել դատական նիստերի դահլիճ:

Նշված փաստերը հաստատվում է դատական սանկցիա կիրառելու մասին որոշմամբ, դատական նիստի ձայնագրությամբ, պատասխանողի բացատրությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 28.09.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Մոնիկա Մարգարյանը փաստաբան է հանդիսանում 14.10.2008թ., և 2008-2017թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ բացի սույն կարգապահական վարույթից այլ կարգապահական վարույթներ չեն հարուցվել:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Մոնիկա Մարգարյանին Կանոնագրքի 4.1 կետի պահանջները խախտելու համար պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, **<u>պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին:</u>** Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Նշված կանոնը նաև վկայակոչող (բլանկետային) է, քանի որ հողում է կատարում փաստաբանի և դատարանի փոխհարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *պաշտպանը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով:*

Սույն գործի հանգամանքներից հետևում է, որ դատարանը դատական նիստին չներկայանալու համար Մոնիկա Մարգարյանի նկատմամբ կիրառել է դատական

սանկցիա, իսկ փաստաբանն իր կողմից նիստին չներկայանալը պատճառաբանել է դատական կարգադրիչի կողմից իրեն (իր իրերը) զննության ենթարկելու ապօրինի պահանջ ներկայացնելով և դրանից հրաժարվելու պայմաններում դատական նիստերի դահլիճ փաստաբանի մուտքն արգելելով:

Խորհուրդը գտնում է, որ սույն սույն կարգապահական վարույթի շրջանակներում անհրաժեշտ է պարզել,

1. *Արդյո՞ք իրավաչափ և հիմնավոր է եղել դատական կարգադրիչի կողմից փաստաբանին զննելու պահանջ ներկայացնելը.*
2. *Արդյո՞ք Մոնիկա Մարգարյանն առանց հարգելի պատճառի դատական նիստին չի ներկայացել՝ դրանով անհարգալից վերաբերմունք դրսևորելով Դատարանի նկատմամբ:*

Նախքան վերը նշված հարցադրումներին անդրադառնալը Խորհուրդը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ դատական օրենսգրքի 213-րդ հոդվածի համաձայն՝ *դատարանում դատավորի, դատավարության մասնակիցների, դատական ծառայողների և այլ անձանց կյանքի, առողջության և արժանապատվության, իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը և դատարանի տարածքի պահպանումը հանցավոր և հակահիրավական այլ ոտնձգություններից ապահովում է դատական կարգադրիչը*:

Նույն օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ *դատական կարգադրիչն իր գործառույթներն իրականացնելու նպատակով իրավունք ունի զննության ենթարկելու դատարան կամ դատական նիստերի դահլիճ մուտք գործող անձանց և նրանց իրերը*:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2011թ. հուլիսի 21-ի թիվ 04-ն որոշմամբ հաստատված «Դատական կարգադրիչների կողմից դատարան կամ դատական նիստերի դահլիճ մուտք գործող անձանց և նրանց իրերը զննության ենթարկելու» կարգի համաձայն՝

«1. Կարգադրիչի կողմից պահպանվող տարածք մուտք գործող անձինք և իրերը կարգադրիչի կողմից կարող է ենթարկվել զննության:

2. Զննումից առաջ անձին առաջարկվում է ներկայացնել այն առարկաները, որոնք արգելվում է մտցնել պահպանվող տարածք: Պահպանվող տարածք մուտք գործող անձանց և իրերի զննում կատարվում է համապատասխան սեռի կարգադրիչի կողմից:

3. Զննման ընթացքում առաջարկվում է ներկայացնել պայուսակի, ճամպրուկի, փաթեթի կամ այլ պահոցի պարունակությունը:

4. Պահպանվող տարածք մուտք գործող անձանց և իրերի զննման ժամանակ արգելված իրերի, առարկաների առկայության դեպքում առաջարկվում է դրանք թողնել համապատասխան պահոցում՝ տարածքից ելք ունենալիս դրանք հետ վերցնելու պայմանով, բացառությամբ սույն կարգով սահմանված դեպքերի:

5. Եթե պահպանվող տարածք մուտք գործող անձանց և իրերի զննման ժամանակ հայտնաբերվում են այնպիսի իրեր կամ առարկաներ, որոնք կարող են մարդու կյանքին կամ առողջությանն ակնհայտ վնաս հասցնելու մասին վկայել, կարգադրիչի կողմից վերցվում են, որի մասին կազմվում է արձանագրություն:

Արձանագրության մեջ գրվում են վերցված առարկաների և իրերի նկարագրությունը: Եթե կիրառվել են տեխնիկական միջոցներ, ապա նշվում է նաև դրանց կիրառման մասին:

Արձանագրությունն ստորագրում են զննություն կատարող կարգադրիչը և զննվողը: Զննվողը կարող է իր դիտողությունները ներկայացնել, որոնք ամրագրվում են արձանագրության մեջ: Արձանագրությունը կազմվում է երկու օրինակից:

Եթե զննվողը հրաժարվում է ստորագրելուց, ապա այդ մասին կարգադրիչը նշում է անում արձանագրության մեջ և ստորագրում այն: Արձանագրության մեկ օրինակը հանձնվում է զննվողին:

Արձանագրությունը վերցված առարկաների և իրերի հետ միասին անհապաղ հանձնվում են ոստիկանությանը...»:

Փաստաբանների դեպքում, այս իրավակարգավորումները գործում են հաշվի առնելով փաստաբաններին առնչվող առանձնահատկությունները:

ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» 25.10.2000թ. №Rec(2000)21 հանձնարարականի 1-ին սկզբունքի 1-ին կետի համաձայն՝ հարկավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի հարգվի, պաշտպանվի և խթանվի փաստաբանի մասնագիտական գործունեության ազատությունը առանց խտրականության և իշխանությունների կամ հասարակության կողմից անհիրավաչափ միջամտության, հատկապես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համապատասխան դրույթների լույսի ներքո:

Նույն սկզբունքի 4-րդ կետի համաձայն՝ փաստաբանները չպետք է տուժեն հետևանքներից կամ ենթարկվեն ցանկացած պատժամիջոցների կամ ճնշումների վտանգի, երբ գործում են իրենց մասնագիտական չափանիշներին համապատասխան:

ՄԱԿ-ի կողմից 1990թ. ընդունված «Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ»-ի 16-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ կառավարություններն ապահովում են, որպեսզի փաստաբանները կարողանան իրենց մասնագիտական բոլոր պարտականությունները կատարել սպառնալիքներից, խոչընդոտներից, ահաբեկումից կամ անարդարացի միջամտությունից զերծ մթնոլորտում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) Մեծ պալատի 23.04.2015թ. Մորիսն ընդդեմ Ֆրանսիայի N 29369/10 գործով կայացված որոշման համաձայն՝

«132. Փաստաբանի յուրահատուկ կարգավիճակը նրան կենտրոնական տեղ է տալիս արդարադատության իրականացման գործընթացում, որպես միջնորդի՝ հասարակության և դատարանի միջև: Սրա հետ կապված նրանք ունեն գլխավոր դերակատարում՝ ապահովելու համար, որպեսզի դատավորները, որոնց առաքելությունը հիմնված իրավունքի գերակայության սկզբունքի վրա համարվում է հիմնարար, պետությունում հասարակության վստահության կրողներ լինեն (Տե՛ս Եվրոպական դատարանի որոշումը «Շեպֆերը ընդդեմ Շվեյցարիայի» գործով (20.05.1998թ., Հաշվետվություն 1998-III, §§ 29-30), Եվրոպական դատարանի Որոշումը «Նիկուլան ընդդեմ Ֆինլանդիայի» գործով (Բողոք N31611/96 ՄԻԵԿ 2002-II, § 45), Եվրոպական դատարանի որոշումը «Ամիխալակիոնեն ընդդեմ Մոլդովայի» գործով (Բողոք N 60115/00, ՄԻԵԿ-2004-III, § 27), Եվրոպական դատարանի մեծ

պալատի վերոհիշյալ որոշումը «Կիպրիանուն ընդդեմ Կիպրոսի» գործով (§ 173), Եվրոպական դատարանի որոշումը «Անդրեն ու ուրիշները ընդդեմ Ֆրանսիայի» գործով (24.07.2008թ., Բողոք N 18603/03, § 24) և կրկին վերոհիշյալ Եվրոպական դատարանի որոշումը «Մորը ընդդեմ Ֆրանսիայի» գործով § 42): Սակայն, որպեսզի հասարակությունը պահպանի վստահությունը արդարադատության իրականացման հանդեպ, հասարակության անդամները պետք է վստահեն իրավաբանական մասնագիտություն ունեցող անձանց կարողությանը՝ իրականացնելու արդյունավետ շահերի ներկայացուցչություն (վերոհիշյալ Եվրոպական դատարանի մեծ պալատի վերոհիշյալ որոշումը «Կիպրիանուն ընդդեմ Կիպրոսի» գործով § 173):

133. Փաստաբանների հատուկ դերակատարումը, արդարադատության իրականացման հարցում որպես անկախ մասնագետների, իր մեջ ներառում է մի շարք պարտավորություններ, հատկապես այն դեպքերում, երբ այն վերաբերվում է նրանց վարքագծին (Եվրոպական դատարանի որոշումը «Վան դեր Մուսելեն ընդդեմ Բելգիայի» գործով (2 մի 3.11.1983թ., Սերիա A, N 70), Եվրոպական դատարանի որոշումը «Կասադո Կոկան ընդդեմ Իսպանիայի» գործով (24.02.1994թ., Սերիա A, N 285-A, § 46), Եվրոպական դատարանի որոշումը «Շտերը ընդդեմ Նիդեռլանդների» գործով (Բողոք N 39657/98, ՄԻԵԿ 2003-XI, § 38), Եվրոպական դատարանի որոշումը «Վերարտը ընդդեմ Նիդեռլանդների» գործով (30.11.2006թ., Բողոք N 10807/04, § 51) և Եվրոպական դատարանի որոշումը «Կոտանն ընդդեմ Ֆրանսիայի» գործով (24.01.2008թ., Բողոք N 17155/03)):

Չնայած փաստաբանները ենթակա են սահմանափակումների իրենց մասնագիտական գործունեության մեջ, որոնք պետք է լինեն շրջահայաց, արդար և ազնիվ, նրանք միաժամանակ օգտվում են բացառիկ իրավունքներից և արտոնություններից, որոնք կարող են տարբեր իրավասություններում տարբեր լինել, դրանց շարքում իր մասնաբաժինն ունի զսպվածությունը դատարանում օգտագործվող դիրքորոշման առնչությամբ (Տես վերոհիշյալ Եվրոպական դատարանի որոշումը «Շտերը ընդդեմ Նիդեռլանդների» գործով):»:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝

«1. Փաստաբանն իր գործունեությունն իրականացնելիս անկախ է, ղեկավարվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և օրենքներով, փաստաբանական պալատի կանոնադրությամբ և փաստաբանական վարքագծի կանոնագրքով:

2. Արգելվում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ֆիզիկական և իրավաբանական անձանց (ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցների) միջամտությունը փաստաբանական գործունեությանը:

4. Փաստաբանը չի կարող հետապնդվել, պատասխանատվության և բերման ենթարկվել, ձերբակալվել, կալանավորվել կամ ենթարկվել իրավունքների այլ սահմանափակման իր մասնագիտական պարտականությունների կատարման կապակցությամբ, ներառյալ՝ վարույթն իրականացնող և այլ մարմիններում հայտնած կարծիքի կամ դիրքորոշման համար:

(...)

7. Փաստաբանի մոտ կամ փաստաբանական կազմակերպության գրասենյակում գտնվող իրավաբանական օգնությանը վերաբերող փաստաթղթերը և տեղեկատվական կրիչները (համակարգիչները, տեսաձայնագրող սարքերը,

լազերային սկավառակները, տեսաժապավենները և այլն) անձեռնմխելի են, չեն կարող առգրավվել (վերցվել) և չեն կարող որպես ապացույց օգտագործվել»:

Փաստաբանն, ունենալով հատուկ և կենտրոնական դեր արդարադատության իրականացմանը նպաստելու, ինչպես նաև իր վստահորդին որակյալ իրավաբանական օգնություն ցույց տալու հարցում, ՀՀ օրենսդրությամբ և միջազգային իրավական ակտերով օժտված է իր գործունեությամբ պայմանավորված մի շարք երաշխիքներից: Մինչդեռ, նշված երաշխիքներով օժտված լինելն ինքնին չի բացառում փաստաբանի՝ իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելիս որոշակի սահմանափակումների ենթարկվելը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված որոշակի պարտականություններ կրելը, մասնավորապես՝ սույն որոշմամբ արձանագրված վերլուծությունների համատեքստում օրենսդրությամբ սահմանված բոլոր պահանջների պահպանմամբ դատարան կամ դատական նիստերի դահլիճ մուտք գործելիս զննության ենթարկվելը (իր մոտ առկա իրերը զննության ենթարկելուն թույլատրելը): Հարկ է նշել, որ ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդն իր 21.07.2017 թվականի «Փաստաբանների իրավունքների պաշտպանության վերաբերյալ» թիվ 15-Լ որոշմամբ անդրադառնալով դատարաններում փաստաբանների զննության հիմնահարցերին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ առանց հատուկ սարքերի փաստաբանին զննելու համար դատական կարգադրիչը պետք է ունենա իրավական և փաստական հիմքեր: Նշվածի հաշվառմամբ Խորհուրդը գտնում է, որ դատական կարգադրիչի կողմից փաստաբանին (նրա իրերը) զննության ենթարկելու **օրինական պահանջ ներկայացնելու և զննության՝ օրենքով սահմանված կարգը պահպանելու դեպքում** փաստաբանը դատարան կամ դատական նիստերի դահլիճ մուտք գործելիս չի կարող հրաժարվել զննության ենթարկվելուց:

Անդրադառնալով սույն որոշմամբ բարձրացված առաջին հարցադրմանը՝ Խորհուրդը գտնում է, որ սույն դեպքում փաստաբանին զննելու համար դատական կարգադրիչը ունեցել է իրավական և փաստական հիմքեր: Իրավական հիմք են հանդիսացել սույն որոշմամբ նշված դատական օրենսգրքի նորմերը: Խորհուրդը գտնում է, որ փաստական հիմքը կարող է լինել այն դեպքում, երբ կա ողջամիտ կասկած, որ փաստաբանը կարող է օրենքով արգելված իրեր տեղափոխել: Սույն դեպքում ողջամիտ կասկած է առաջացել պայուսակը մետաղաորսիչ սարքով զննելուց հետո, քանի որ մետաղաորսիչ սարքը ձայնային ազդանշան էր արձակել: Այս մասին նշել է նաև Պատասխանողն իր բացատրությունում:

Ուստի Խորհուրդը գտնում է, որ սույն դեպքում իրավաչափ և հիմնավոր է եղել դատական կարգադրիչի կողմից փաստաբանին զննելու պահանջ ներկայացնելը:

Անդրադառնալով որոշմամբ բարձացված երկրորդ հարցադրմանը Խորհուրդը գտնում է, որ սույն գործի փաստական տվյալներից հետևում է, որ նույն օրը դատական նիստերի դահլիճ մուտք գործելուց առաջ դատական կարգադրիչի կողմից ներկայացվել է օրինական պահանջ՝ փաստաբան Մոնիկա Մարգարյանին (նրա իրերը) զննության ենթարկելու վերաբերյալ, ուստի վերջինիս կողմից զննվելուց հրաժարվելու պատճառաբանությամբ դատական նիստին չներկայանալը Խորհրդի կողմից որևէ կերպ չի կարող դիտարկվել որպես դատական նիստից բացակայելու հարգելի պատճառ: Սույն գործի փաստերը գնահատելով վերոգրյալ իրավական նորմերի համատեքստում՝ Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Մոնիկա Մարգարյանը, թիվ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործի շրջանակներում հանդիսանալով

մեղադրյալ Տիգրան Մանուկյանի պաշտպանը, պարտավոր էր դատարանի կանչով ներկայանալ 03.07.2017 թվականին հրավիրված դատական նիստին:

Նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Մոնիկա Մարգարյանը թիվ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով դատական նիստին առանց հարգելի պատճառի չի ներկայացել՝ դրանով անհարգալից վերաբերմունք դրսևորելով Դատարանի նկատմամբ: Վերոգրյալը նկատի ունենալով Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Մոնիկա Մարգարյանը թույլ է տվել Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտում:

Կարգապահական տույժի ընտրությունը

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Պալատի խորհուրդը հաշվի առնելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասում նշված հանգամանքները, գտնում է, որ փաստաբան Մոնիկա Մարգարյանի նկատմամբ պետք է կիրառել «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, Պալատի Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1.Փաստաբան Մոնիկա Մարգարյանին, (արտոնագիր 841) ճանաչել մեղավոր Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի խախտման համար:

2. Փաստաբան Մոնիկա Մարգարյանի (արտոնագիր 841) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Մոնիկա Մարգարյանին և դիմողին:

<u>Ծանոթություն</u>. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկ ամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարեն Սարդարյան

31 հոկտեմբերի 2017թ.
թիվ ԿԳ/98-Ա
ք. Երևան